ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝ Արմինե Երգենյանի կողմից 2024թ-ի մարտի 15-ից մինչև 2024թ-ի հունիսի 15-ը կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիր

Փորձագետի կողմից իրականացվել է աշխատանքային ծրագրով նախատեսված ինը կետերից յոթ կետերի մասով ամենօրյա ռեժիմով աշխատանքներ, իսկ մյուս կետի մասով հիմնականում կատարվել է տվյալների ուսումնասիրում և հավաքագրում: Մասնավորապես.

1) Իրականացվել է բյուջետային գործընթացի շրջանակներում, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման, հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ (տարեկան և առաջին եռամսյակի բյուջետային հաշվետվություն՝ LS Finance, ՀԾ ծրագրերով, հաշվապահական օրդերների մուտքագրում, պահեստի վարում):

2) Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակման, ֆինանսական ռեսուրսների գնահատման, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի փետրվար, մարտ, ապրիլ ամիսների տվյալների հավաքագրման աշխատանքներ և ներկայացվել է հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ:

3) Իրականացվել է փետրվար, մարտ, ապրիլ ամիսների Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկ և հաշվետվություններ է ներկայացվել համապատասխան պետական մարմիններ:

4) Իրականացվել է «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ի օդանավ շահագործողի վերասերտիֆիկացման շրջանակներում ներկայացվող հայտին կից ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրություն և ներկայացվել առաջարկություն:

5) Ուսումնասիրվել և վերլուծվել է Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված տեղեկատվությունը (ECAC 2023 թվականի բյուջեի անդամավճարի վճարման և գործողությունների ծրագրի ճանապարհային քարտեզի վերաբերյալ տարվել են քննարկումներ) և ներկայացվել է կոնտակտային անձին:

6) Ուսումնասիրվել և վերլուծվել է ավիաընկերությունների կողմից ներկայացված ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ օդանավ շահագործող ընկերությունների՝ «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ, «Էյր Դիլիջանս» ՍՊԸ-ի ածխաթթու գազերի արտանետումների ծրագրի և ծավալների վերաբերյալ տեղեկատվություն:

7) Իրականացվել է Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ կատարվել է փետրվար, մարտ և ապրիլ ամիսների վերլուծություն և ամփոփման աշխատանքներ:

Աշխատանքային ծրագրով նախատեսված մյուս կետի՝ ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների շրջանակներում իրականացվող աշխատանքների ուսումնասիրության մասով ծանոթացել եմ առկա նյութերին և հաշվառել դրանք:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝

Արմինե Երգենյան

Արմինե Երգենյանի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ՝

_____

(բավարար, լավ/կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ՝

Միհրան Խաչատրյան

17.06.2024թ.